**Անմիջական կապ բուժաշխատողների հետ**

**Բիոպարոքս (ֆուզաֆունգին) ցողացիր**

**Նոր հակացուցում և խորհուրդներ՝ ծանր ալերգիկ ռեակցիաների ռիսկի նվազեցման նպատակով**

Հարգելի մասնագետ,

«Լե Լաբորատուար Սերվիե» ընկերությունը ցանկանում է Ձեզ տեղեկացնել ֆուզաֆունգին ցողացիրի կիրառման վերաբերյալ փոփոխությունների մասին:

**Նոր խորհուրդների համառոտ ամփոփում.**

- **Ֆուզաֆունգինն այժմ հակացուցված է՝**
  - **12 տարեկանից ցածր տարիքի երեխաների համար (նախկինում ֆուզաֆունգինը հակացուցված էր 30 ամսականից ցածր երեխաների համար),**
  - **ալերգիկ նախատրամադրվածությամբ և բրոնխոսպազմով հիվանդների համար (նախկինում այս հիվանդների համար նախատեսված էր կիրառման նախազգուշացում):**

«Լե Լաբորատուար Սերվիե» ընկերությունը վերջերս իրականացրել է ալերգիկ ռեակցիաների (շնչառական և մաշկային) դեպքերի հետ մարքեթինգային պարբերական հետազոտություն.

- հաշվի առնելով հազվադեպ, բայց ծանր դեպքերի դիտարկումը 12 տարեկանից ցածր տարիքի երեխաների շրջանում, «Լե Լաբորատուար Սերվիե» ընկերությունը առաջարկել է ֆուզաֆունգինի կիրառումը հակացուցել 12 տարեկանից ցածր տարիքի երեխաների համար,
- բացի այդ, դիտարկումը ցույց է տվել, որ ծանր ալերգիկ ռեակցիաները ավելի հաճախ դիտվում են ալերգիկ նախատրամադրվածությամբ անձանց շրջանում: Այսպիսով, «Լե Լաբորատուար Սերվիե» ընկերությունը առաջարկել է խստացնել կիրառման նախազգուշացումները ալերգիկ նախատրամադրվածությամբ և բրոնխոսպազմով հիվանդների շրջանում և հակացուցել ֆուզաֆունգինի կիրառումը այս հիվանդների համար:

**Տեղեկատվության հաղորդում**

Հիշեցնենք, որ անհրաժեշտ է հաղորդել ցանկացած անբարենպաստ ազդեցության մասին Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն:

Հասցե՝ Կոմիտաս 49/4, 0051 Երևան, Հայաստան

Հեռ՝ + 374 10 23 16 82 * 123, Թեժ գիծ՝ + 371 10 23 72 65, + 374 98 77 33 68

Կայք՝ www.pharm.am, էլ. հասցե՝ vigilance@pharm.am:

**Հետադարձ կապ ընկերության հետ**

Սույն տեղեկատվության հետ կապված հետագա հարցերի համար խնդրում ենք դիմել «Լե Լաբորատուար Սերվիե» ընկերության հայաստանյան ներկայացուցչություն՝ դեղազգոնության պատասխանատու Մարիամ Անտոնյանին, հեռ.՝ + 374 91 03 20 80, + 374 10 50 50 74, էլ. հասցե՝ mariam.antonyan@servier.com, հասցե՝ Հյուսիսային պողոտա 1, «Նորդ» բիզնես կենտրոն, 5-րդ հարկ, գրասենյակ N 13: